ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ



2019 **ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ**
(ՀԱԿԻՐՃ ՏԱՐԲԵՐԱԿ)

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացված է համայնքի հանրային քննարկման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Բյուջեն, լինելով համայնքի եկամուտների ձևավորման ու ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագիր, ուղղված է ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքային ծրագրերի իրականացմանը: Այլ կերպ ասած, բյուջեն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծրագրերի ու միջոցառումների համապարփակ թվարկումն է գալիք ֆինանսական տարվա համար, ՏԻՄ-երի գործունեության յուրաքանչյուր բնագավառում: Լավագույն դեպքում, բյուջեն պոտենցիալ սպառողների միջև սահմանափակ միջոցների համապարփակ և հետևողական բաշխումն է: Որպես այդպիսին՝ բյուջեն ՏԻՄ-երի գործունեության ֆինանսական կառավարման առանցքն է:

Համայնքի 2019թ. ծրագրային բյուջեի ձևաչափի ընտրությունը պայմանավորված է ծախսերի կատարման արդյունավետությամբ և վերջնական արդյունքների ստացմամբ:

Ծրագրային բյուջեն ցույց է տալիս, 2019թ. բյուջետային ծրագրերն իրականացնելիս, որոշակի ռեսուրսներ ներդնելու դեպքում արդյունքների ձեռքբերումը՝ միաժամանակ, արմատավորելով նոր որակի և մակարդակի կառավարում, ձևավորելով ներդրված ռեսուրսների և ստացված արդյունքների միջև ինտեգրացված կապ, ապահովելով բյուջետային ծրագրի միջոցառումների ու գործողությունների կատարման թափանցիկությունն ու վերահսկման արդյունավետությունը:

Ծրագրային բյուջետավորման գործընթացը հնարավորություն է տալիս համայնքի հնգամյա զարգացման ծրագրի (ՀՀՌԾ-ի) և տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ-ի) հիման վրա պլանավորել համայնքի ֆինանսական միջոցները, դրանք օգտագործել խնայողաբար, արդյունավետ և հրապարակային:

Որդեգրելով աշխատանքային նոր ռազմավարություն՝ համայնքի բյուջետավարումը դադարում է դիտարկվել որպես ֆինանսական պլանի կազմում ու կատարում, այլ առավել կարևորվում են բնակչությանը համայնքային որակյալ ծառայությունների մատուցումը և համայնքի խնդիրների աստիճանական լուծումը:

Կարևորելով մասնակցային գործընթացները տեղական ինքնակառավարման համակարգում՝ բյուջետավորման այս ձևաչափով ամրագրվում է հաշվետվողականությունը, շարունակականությունը, ծրագրերի առաջնահերթությունների հստակ սահմանումը, բյուջետավարման գործառույթների հստակ բաշխումը, չափելիությունը:

Աշտարակ համայնքի 2019թ.-ի ծրագրային բյուջեի իրազեկման այս ձևաչափով ներկայացվում է համայնքի բնակիչների բարեկեցությանն բարձրացմանն ուղղված տարաբնույթ ծառայություններն ու հնարավոր ներդրումային ծրագրերը:

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1996թ-ից Արագածոտնի մարզկենտրոն դարձած Աշտարակ համայնքը հանրապետության միջին մեծության քաղաքներից է: Գտնվում է Երևանից մոտ 20կմ հյուսիս-արևմուտք, Քասաղ գետի երկու ափերին, ծովի մակերևույթից 1075մ միջին բացարձակ բարձրության վրա: Ավտոմոբիլային ճանապարհների կարևոր խաչմերուկ է: Գտնվում է Երևան-Վանաձոր, Երևան-Գյումրի, Վանաձոր-Էջմիածին ուղիների հատման վայրում: Աշտարակ հնամենի բնակավայրը հիշատակվում է անհիշելի ժամանակներից: Աշտարակը Հայաստանի հնագույն բնակավայրերից է, աչքի է ընկնում պատմական և ճարտարապետական հուշարձանների առատությամբ, ինչպես նաև Հայաստանի չափանիշներով բարենպաստ կլիմայով: Աշտարակը պատմականորեն միշտ աչքի է ընկել ավանդույթների անխառն պահպանմամբ և իր ուրույն դեմքն ունենալու շնորհիվ ներկայացել է որպես Հայաստանին առավել բնորոշ գյուղ, իսկ 1965թ-ից՝ որպես քաղաք: Աշտարակ քաղաքը իր ուրույն տեղը ունի նաև Հայաստանի գյուղատնտեսության, արդյունաբերության և հատկապես գիտության մեջ:

Համայնքի բնակչության առկա թիվը ըստ բնակչության ռեգիստրի տվյալների կազմում է 24901 մարդ, որից կանայք 10961, տղամարդ 13940: Ընտանիքների /ծխերի/ թիվը՝ 5478:

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԿԱՄ ԻՆՉՊԻՍԻ՞Ն ԵՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ՏԵՍՆԵԼ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔՆ ԱՊԱԳԱՅՈՒՄ

Աշտարակ համայնքը պատմամշակութային և տուրիզմի կենտրոն է՝ արդիականացված ենթակառույցներով, ծառայությունների մատուցման նոր որակով, գործազրկության ցածր ցուցանիշներով:

Աշտարակը նաև ավանդական մշակույթի զարգացման օրինակելի քաղաք է:

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համայնքի 2019թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Բյուջետային այս տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

1. Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝
   - Շարունակել հողի հարկի և գույքահարկի տվյալների շտեմարանների ճշտման և թարմացման գործընթացը,
   - իրականացնել տեղական տուրքերի և վճարների, համայնքային ծառայությունների մատուցման դիմաց վճարների սահմանման և գանձման ճկուն քաղաքականություն,
   - խթանել ձեռներեցությունը և համայնքային տնտեսության զարգացումը,
   - բարձրացնել սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:
2. Նպատակային և արդյունավետ օգտագործել բյուջեի միջոցները՝

- բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը,
- բյուջետային հատկացումների, ծրագրերի, միջոցառումների և ցուցանիշների մեջ ապահովել գենդերային տեսանկյունը,
- բարձրացնել քաղաքապետարանի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատանքի արդյունավետությունը:

3. Բարձրացնել համայնքի աղբահանության և սանմաքրման ծառայությունների մատուցման մակարդակը:
4. Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, նյութատեխնիկակային բազայի համալրման, ընթացիկ նորոգման և ջեռուցման աշխատանքները:
5. Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը:
6. Աջակցել բնակչության սոցիալապես անապահով ընտանիքներին:
7. Լրացուցիչ ուշադրություն դարձնել այն հարցին, թե ինչպես են բյուջետային գործընթացները եւ որոշումները տարբեր կերպ ազդում կանանց եւ տղամարդկանց կյանքի վրա
8. Նպաստել տարածաշրջանում զբոսաշրջության զարգացմանը:
9. Ակտիվորեն համագործակցել միջազգային կազմակերպությունների հետ՝ համայնքային տնտեսությունում լրացուցիչ ներդրումներ ապահովելու նպատակով:

Համայնքի 2019թ. զարգացման հիմնական ուղղությունները ուղղված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինպես նաև համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

2015թ.-ից մեր կողմից իրականացվում է նաև ծախսերի կատարման ծրագրային բյուջեի ձևաչափի ընտրությունը, որը պայմանավորված է ծախսերի կատարման արդյունավետությամբ և վերջնական արդյունքների ստացմամբ:

Ծրագրային բյուջեն ցույց է տալիս 2019 թվականի բյուջետային ծրագրերն իրականացնելիս՝ որոշակի ռեսուրսներ ներդնելու դեպքում արդյունքների ձեռքբերումը, միաժամանակ արմատավորելով նոր որակի և մակարդակի կառավարում, ձևավորելով ներդրված ռեսուրսների և ստացված արդյունքների միջև ինտեգրացված կապ, ապահովելով բյուջետային ծրագրի միջոցառումների ու գործողությունների կատարման թափանցիկությունն ու վերահսկման արդյունավետ մեխանիզմը:

Կարևորելով մասնակցային գործընթացների ներդրումը մեր համայնքում, բյուջետավարման այս ձևաչափով ևս ամրագրվում է հաշվետվողականությունը, շարունակականությունը, ծրագրերի և խնդիրների կատարման առաջնահերթությունների հստակ սահմանումը, բյուջետավարման գործառույթների հստակ վերաբաշխումը, չափելիությունը:

Որդեգրելով աշխատանքային նոր ռազմավարություն, առավել կարևորվում են բնակչությանը համայնքային ծառայությունների արդյունավետ մատուցումը և համայնքի խնդիրների աստիճանական լուծումը:

Ակնկալում եմ մեր համաքաղաքացիների աջակցությունն ու ակտիվ մասնակցությունը՝ համայնքի առջև դրված ծրագրային խնդիրների իրականացման և շոշափելի արդյունքների հասնելու նպատակով տեղական իշխանությունների որդեգրած քաղաքականությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ.- ԲՅՈՒՋԵԻ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

հազար դրամ



ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ.-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԵՆ՝

564 254 600 **ՀՀ դրամ**

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 3 ՏԱՐՎԱ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

հազար դրամ



ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ.-Ի ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ

589 254 600 **ՀՀ դրամ**

ԻՆՉ ՏԵՍԱԿԻ ԾԱԽՍԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ

հազար դրամ



ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՓՈՓՈԽՎԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 3 ՏԱՐՈՒՄ

հազար դրամ



Ի՞ՆՉ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՆ ԾԱԽՍՎԵԼՈՒ 2019 Թ.-Ի ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ Ի՞ՆՉ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՆ ՁԵՌՔ ԲԵՐՎԵԼՈՒ

ՀՀ	Ծրագրի նպատակ	Վերջնական արդյունք
	Բաժին (Ոլորտ) 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	
01	Համայնքի արդյունավետ կառավարման համակարգի ստեղծում	ՏԻՄ-երի՝ համայնքի ղեկավարի և ավագանու, կողմից ուղղորդված գործունեությունն ապահովված է
02	Ապահովել համայնքում ընդհանուր բնույթի ծառայությունների իրականացումը	ՔԿԱԳ գործունեության ապահովում, տեղեկատվական ծրագրերի առկայություն
03	Տեղեկատվական ծրագրերի, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ հանրային ծառայությունների ձեռք բերում	Համայնքի զարգացման համար անհրաժեշտ ծառայությունների ձեռք բերում
04	Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության մակարդակի բարձրացում	Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ մասնակցային, նպատակային գործունեության ծավալում և իրականացում
05	Բարելավլ համայնքում ընդհանուր բնույթի այլ հանրային ծառայությունների մատուցումը	Համայնքի զարգացման համար անհրաժեշտ կապիտալ վերանորոգման աշխատանքների արդիականացման համար անհրաժեշտ գույքի և ծառայությունների ձեռք բերում
	Բաժին (Ոլորտ) 2. Պաշտպանություն	
01	Աջակցել համայնքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպման գործընթացին՝ իր լիազորությունների շրջանակներում	Համայնքի աջակցությունը քաղաքացիական պաշտպանությանը
	Բաժին (Ոլորտ) 4. Տնտեսական հարաբերություններ	
01	Համայնքում նպաստել գյուղատնտեսության զարգացմանը՝ վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև ոլորտում իրականացվող համապետական միջոցառումների աջակցության միջոցով	Համայնքն ունի զարգացած գյուղատնտեսություն, իրականացվում են անասնահամաճարակային միջոցառումները, բարձրացել է ոլորտի արդյունավետությունը
02	Աջակցել համայնքում նոր թաղամասերի գազաֆիկացմանը	Գազաֆիկացված փողոցների և բնակարանների ավելացում
03	Ունենալ բարեկարգ փողոցներ	Ասֆալտապատ և նշագծված կենտրոնական փողոցներ
04	Բյուջեի ֆոնդային մասի եկամուտների ապահովում	Համայնքի բյուջեի եկամուտների ավելացում
	Բաժին (Ոլորտ) 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն	

01	Ունենալ մաքուր և հրապուրիչ շրջակա միջավայրով համայնք	Համայնքում հետևողական իրականացվում են աղբահանության աշխատանքները
02	Ընդլայնել համայնքի աղբահանության ծառայության նյութատեխնիկական բազան	Համայնքում աղբահանության ծառայությունը բարելավվում է
	Բաժին (Ոլորտ) 6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	
01	Ապահովել համայնքի բարեկարգման աշխատանքների և բազմաբնակարան շենքերի սպասարկումն ու պահպանումը	Բարեկարգ համայնք և բազմաբնակարան շենքերում համատիրությունների միջոցով ծառայությունների կազմակերպում
02	Ապահովել համայնքի փողոցների լուսավորության համակարգի անխափան աշխատանքը	Համայնքը լուսավոր փողոցներով բնակավայր է
	Բաժին (Ոլորտ) 7. Առողջապահություն	
	Բաժին (Ոլորտ) 8. Հանգիստ, մշակույթ և կրոն	
01	Նպաստել համայնքում սպորտային միջոցառումների կազմակերպմանն ու անցկացմանը և անհատ մարզիկների ինքնաճանաչմանը	Համայնքում մասսայականացվում են տարբեր մարզաձևեր, առկա են մարզական բարձր ցուցանիշներ
02	Համայնքի բնակիչների համար ստեղծել որակյալ մշակութային ծառայություններից օգտվելու հնարավորություններ	Համայնքի բնակիչները կարող են օգտվել մշակույթի ոլորտում մատուցվող ծառայություններից ամբողջ տարվա ընթացքում
03	Համայնքում ապահովել մասսայական միջոցառումների կազմակերպումը, նպաստել ավանդական մշակույթի պրոպագանդմանը	Համայնքային ակտիվ մշակութային կյանք, զբոսաշրջության զարգացման համար ստեղծված նախադրյալներ
04	Աջակցել քաղաքացիական հասարակության կառույցներին, կրոնական և երիտասարդական կազմակերպություններին	Համայնքի մասին տեղեկատվության տարածում և զարգացման ծրագրերի առկայություն
05	Համայնքի բնակչությանը մատուցվող մշակութային ծառայությունների արդիականացում	Համայնքի բնակչությանը մատուցվում են մշակութային որակյալ ծառայություններ
06	Նպաստել համայնքում տուրիզմի զարգացմանը և ավանդական մշակույթի ներդրման նախադրյալների ստեղծմանը, առողջ ապրելակերպի խթանմանը	Տուրիզմի հեռանկարային զարգացման և ավանդական մշակույթի ներդրման նախադրյալների առկայություն և հանրայնացում, հանգստի նոր կենտրոնների և խաղահրապարակների առկայություն
	Բաժին (Ոլորտ) 9. Կրթություն	
01	Ապահովել համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության և դաստիարակաության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցումը	Համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցում

02	Ապահովել համայնքի բնակչությանը արտադպրոցական կրթության և դաստիարակաության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցումը	Համայնքի բնակչությանը արտադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտում մատուցվում են որակյալ ծառայություններ
03	Աջակցել համայնքի կրթական այլ հաստատություններին, ուսանողներին և սովորողներին	Համայնքի դպրոցներին տրվող դրամաշնորհներ, այլ նպաստներ, ինչպես նաև բարձրագույն, միջնակարգ մասնագիտական և այլ հաստատություններում սովորողներին ֆինանսական աջակցության հնարավորություն
04	Ապահովել արտադպրոցական դաստիարակության հիմնարկներում կապիտալ նորոգման աշխատանքների իրականացումը	Արտադպրոցական հիմնարկներում ծառայությունների մատուցման որակի բարելավում
	Բաժին (Ոլորտ) 10. Սոցիալական պաշտպանություն	
01	Նպաստել համայնքի բնակչության որոշակի խավերի սոցիալական վիճակի բարելավմանը՝ ժամանակավոր անաշխատունակության դեպքում	Համայնքի բնակչությանը, սոցիալապես անապահով խավին, ժամանակավոր անաշխատունակության դեպքում մասնակի կամ ամբողջական ֆինանսական աջակցության հնարավորություն
02	Բարելավել համայնքի բնակիչների սոցիալական վիճակը	Համայնքում զոհված ազատամարտիկների ընտանիքների, սոցիալապես անապահով խմբերի վիճակի բարելավում, պատանի երկրապահների ակումբի գործունեության ակտիվացում, ֆինանսական օգնությունների տրամադրում

Ո՞Ր ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԵՆ ԾԱԽՍՎԵԼՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հ/հ	ՈԼՈՐՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ	ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ (%)
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	589254,6	100
1.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	165437,5	28.1
2.	Պաշտպանություն	200	0.0
3.	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	-89350	-15,2
4.	Տնտեսական հարաբերություններ	0	0,0
5.	Շրջակա միջավայրի պաշտպանություն	100000	17,0
6.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	105000	17,8
7.	Առողջապահություն	0	0,0
8.	Հանգիստ, մշակույթ և կրոն	58000	9,8
9.	Կրթություն	208467,1	35,4
10.	Սոցիալական պաշտպանություն	11500	2,0
11.	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	30000	5,1

ԻՆ՞Չ ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ

հազար դրամ

Հ/հ	ՈԼՈՐՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Վարչական բյուջե
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	564255,1
1.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	131438
2.	Պաշտպանություն	200
3.	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0
4.	Տնտեսական հարաբերություններ	150
5.	Շրջակա միջավայրի պաշտպանություն	90000
6.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	74000
7.	Առողջապահություն	0
8.	Հանգիստ, մշակույթ և կրոն	21500
9.	Կրթություն	205467,1
10.	Սոցիալական պաշտպանություն	11500
11.	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	30000

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի ցանկը (անվանումը)	Ծախսեր
Բաժին (Ոլորտ) 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ				
01	1	1	Ծրագիր 1. Համայնքում արդյունավետ տեղական ինքնակառավարում	120790
01	3	1	Ծրագիր 2. Համայնքում ընդհանուր բնույթի ծառայությունների իրականացում	7397.5
01	6	1	Ծրագիր 3. Տեղեկատվական ծրագրերի, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ հանրային ծառայությունների ձեռք բերում	2350
Բաժին (Ոլորտ) 2. Պաշտպանություն				
02	2	0	Ծրագիր 1. Աջակցություն համայնքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպման գործընթացին	200
Բաժին (Ոլորտ) 4. Տնտեսական հարաբերություններ				
04	2	1	Ծրագիր 1. Համայնքի վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործում, ինչպես նաև աջակցություն գյուղատնտեսության ոլորտում իրականացվող համապետական միջոցառումներին	150
Բաժին (Ոլորտ) 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն				
05	1	0	Ծրագիր 1. Համայնքը դարձնել մաքուր և հրապուրիչ շրջակա միջավայրով բնակավայր, արդյունավետ աղբահանության ծրագրերի իրականացում	90000
Բաժին (Ոլորտ) 6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն				
06	1	1	Ծրագիր 1. Համայնքում բարեկարգման աշխատանքների իրականացում, բազմաբնակարան շենքերի սպասարկում և պահպանում	70000
06	4	1	Ծրագիր 2. Համայնքում փողոցների լուսավորության համակարգի անխափան աշխատանքի ապահովում	4000
Բաժին (Ոլորտ) 8. Հանգիստ, մշակույթ և կրոն				
08	1	1	Ծրագիր 1. Համայնքում սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում, անհատ մարզիկների ինքնաճանաչում	1500
08	2	3	Ծրագիր 2. Համայնքային ենթակայության մշակութային հիմնարկների բնականոն գործունեության ապահովում, պայմանների բարելավում	13500
08	2	4	Ծրագիր 3. Համայնքում մասսայական միջոցառումների կազմակերպում, ավանդական մշակույթի պրոպագանդում	3500
08	3	0	Ծրագիր 4. Քաղաքացիական հասարակության կառույցների, կրոնական և երիտասարդական կազմակերպությունների աջակցում և գործունեության ապահովում	2500
Բաժին (Ոլորտ) 9. Կրթություն				
09	1	1	Ծրագիր 1. Համայնքի նախադպրոցական կրթության և դաստիարակության գործունեության ապահովում, պայմանների բարելավում	152500
09	5	1	Ծրագիր 2. Համայնքի արտադպրոցական կրթության և դաստիարակության գործունեության ապահովում, պայմանների բարելավում	50167.1

09	8	1	Ծրագիր 3. Համայնքի կրթական այլ հաստատություններին, ուսանողներին, սովորողներին ֆինանսական աջակցության տրամադրում	2800
Բաժին (Ոլորտ) 10. Սոցիալական պաշտպանություն				
10	1	1	Ծրագիր 1. Համայնքի բնակչության որոշակի խավերին ժամանակավոր անաշխատունակության, վատառողջության դեպքերում ֆինանսական աջակցության տրամադրում	1500
10	7	1	Ծրագիր 2. Սոցիալական օգնության տրամադրում զոհված ազատամարտիկների ընտանիքներին, պատանի երկրապահներին, ինչպես նաև սոցիալական խոցելի ընչազուրկ խմբերին և կարիքավորներին	10000
Բաժին (Ոլորտ) 11. Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր				
11	*0*	*0*	***Ընդամենը համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի միջոցների հաշվին իրականացվող ծրագրեր***	*30000*

ԻՆՉ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ

հազար դրամ

Հ/h	ՈԼՈՐՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ֆոնդային բյուջե
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	25000
1.	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ**	34000
2.	**Պաշտպանություն**	0
3.	**Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն**	0
4.	**Տնտեսական հարաբերություններ**	-89500
5.	**Շրջակա միջավայրի պաշտպանություն**	10000
6.	**Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն**	31000
7.	**Առողջապահություն**	0
8.	**Հանգիստ, մշակույթ և կրոն**	36500
9.	**Կրթություն**	3000
10.	**Սոցիալական պաշտպանություն**	0
11.	**Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր**	0

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի ցանկը (անվանումը)	Ծախսեր
Բաժին (Ոլորտ) 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ				
01	1	1	Ծրագիր 4. Բնակչությանը մատուցվող ծառայությունների արդիականացում, հանրային մասնակցությամբ որոշումների կայացում	5000
01	6	1	Ծրագիր 5. Համայնքում ընդհանուր բնույթի այլ հանրային ծառայությունների իրականացում	29000
Բաժին (Ոլորտ) 4. Տնտեսական հարաբերություններ				
04	3	2	Ծրագիր 2. Համայնքում նոր թաղամասերի գազաֆիկացում	1500
04	5	1	Ծրագիր 3. Համայնքի ճանապարհային տրանսպորտային համակարգերի օգտագործում, կառուցում և պահպանում	72000
04	9	1	Ծրագիր 4. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի իրացում	-163000
Բաժին (Ոլորտ) 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն				
05	1	0	Ծրագիր 2. Համայնքի աղբահանության ծառայության նյութատեխնիկական բազայի ավելացում	10000
Բաժին (Ոլորտ) 6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն				
06	0	0	Ծրագիր 2. Համայնքում փողոցների լուսավորության համակարգի անխափան աշխատանքի, անվտանգ երթևեկության համար պայմանների ապահովում	31000
Բաժին (Ոլորտ) 8. Հանգիստ, մշակույթ և կրոն				
08	1	1	Ծրագիր 6. Հանգստի կազմակերպմանն ու առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված ենթակառույցների ստեղծում	31000
08	2	3	Ծրագիր 5. Մշակույթի տների կապիտալ նորոգում և ծառայությունների արդիականացում	5500
Բաժին (Ոլորտ) 9. Կրթություն				
09	5	1	Ծրագիր 4. Արտադպրոցական դաստիարակության հիմնարկներում կապիտալ նորոգման աշխատանքների իրականացում	3000